

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱԳԻՐԱԿԱՆ

ՎԱՐԱԳՆ ԱԲԳԱՐՅԱՆ

ՀԱՅՈՅ ԱՐՔԱՅԱՏՈՂՄԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԾԱԳՈՒՄԸ՝ ՀԱՅ ՍՏՐԱԲՈՆԻ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

Ստրաբոնի «Աշխարհագրությունում» (գրված Ք.ա. I դարի վերջին տասնամյակում) ժամանությունը և ապահովությունը՝ առավելական Արգոնավորդների որ ժամանակից մինչև հոյս հետինակի ապրած օրերը: Հնագոյն տեղեկությունների սկզբանաբար Ալեքսանդր Մակեդոնացու (Ք.ա. 336 – 323 թթ.) գորավարներ Կիրսիլոս Փարավացու և Մետիոս Լարիսացու հաղորդած այն ավանդությունն է, որի համաձայն երկիրը Արմենիա է կոչվել Թեսալիայի Արմենիոն քաղաքից գաղթած Արմենոսի անունով: Նա Յասոնի հետ միասին ճավարկել է դեպի Կոլիսիս (Կողջիս) և հասել մինչև Կասպից ծովը, այցելելով Իրերիս (Վրաստաճ), Ալբանիա (Աղվանք) և բազում այլ վայրեր Հայաստանում և Մարաստանում (Մետիայում): Արմենոսի ուղեկիցներից ոմանք քնակություն են հաստատել Հայաստանի Ակիլիսներ երկրամասում, ոմանք էլ՝ Սյուսպիրիտիստում, հասմելով մինչև Կալաքեն և Անդիարեն¹:

Նոյն ավանդությունից օգտվել է նաև Ստրաբոնի ժամանակակից պատմիչ Պոմպեոս Տրոգոսը, ինչպես դա երևում է Օրա չպահպանված աշխատության համառոտագրությունից, որի հետինակն է Հուստինոսը (Ք.հ. II դար): Ըստ Օրա՝ Հայաստանը «հիմնադրվել է Արմենիոսի կողմից (condita est autem ab Armenio)»²: Մի որիշ տեղ նա հայտնում է. «Յասոնի մահից հետո Մետոսը ... մոր պատվին հիմնեց Մետեա քաղաքը, իսկ իր անունով ստեղծեց մետացիների թագավորությունը, որի տիրապետության տակ հետագայում ընկավ Արևելքի կայսրությունը ... Յասոնի զորավարներից մեկը՝ Արմենիոսը նույնական իմբը էլ լինելով թեսալացի, Յասոն թագավորի մահից հետո վերաբավարեց ցիրուցան թափառող զորքերի բազմությունը և հիմնեց Արմենիան (Post mortem Iasonis Medus ... in honorem matris Mediam urbecit condidit regnumque ex nomine suo Medorum constituit, sub cuius maiestate Orientis postea imperium fuit ... Armenius quoque, et ipse Thessalus, unus de numero ducum Iasonis, recollecta multitudine, quae amissio Iasone rege passim usagabatur, Armeniam condidit)³: Ստրաբոնը նոյնպես վկայում է Արևելքի իշխանությունը Յասոնի և Մետեայի կողմից վերջինի դրդի Մետոսի ժառանգելու մասին⁴:

Ինչպես հոյս աշխարհագրի, այնպես էլ Տրոգոսի հաղորդումներում ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ Օրանք Մարաստանի դեպքում նկատի ունեն ոչ միայն երկրի, այլև թագավորության հիմնադրումը, մինչդեռ Հայաստանի մասին խոսելիս հիշատակում են սուսկ երկիրը: Նման երևույթի համովիպում ենք նաև հայկական աղբյուրներում:

¹ Strabo, XI, 4, 8: XI, 14, 12:

² Just., XLII, 2:

³ Just., XLII, 3:

⁴ Strabo, XI, 13, 10:

Մովսես Խորենացին Հայկի և Բելի պատերազմի Ակարագրության մեջ հայերի անվանադիր նախնական եղբեք «արքայ» չի կոչում, այնին Բելին անվանում է «արքան Տիտանեան»⁵: Հարեւածին Հայկի և Տիտանյան Բելի միջև Ակատվող այս տարրերությունը առկա է նաև մեր մյուս հին պատմիչի մոտ, որին հայագիտության մեջ ընդունված է պայմանականորեն անվանել Սերեոս⁶:

Հայ մատենագիրները Հայկին առանց թագավորական տիտղոսի ներկայացնելով՝ Ակատի ունեն այն հանգամանքը, որ նա չի հմազամելվել բռնակալ Բելին և չի ցանկացել լինել Բարեկոնի չար թագավորության փոխարքաներից մեկը: Ի տարրերություն Հայկի, նրա շառավիդ Արամը ընդունում է Ասորեստանի և Նիմվեի իշխանությունը՝ Նիմոսից ստանալով մարգարտե վարսակալ կրելու և նրա թագավորության երկրորդ լինելու իրավունքը⁷: Առաջին հայ թագավորի դերը, սակայն, Խորենացին Արամին չի հատկացնում, ինչքան էլ որ նա Հայաստանի համբավը տարածել է ամբողջ աշխարհով մեկ: Այդ դերը Վերապահվում է շատ ավելի համեստ Պարույրին, Ակայորդու որդուն, Վարքակն Մարի դաշնակցին⁸, որը չեր պատկանում դառնաշունչ քաղդեացիների և մոգերի թագավորությանը:

Մեղոսին և Արմենոսին կարելի է համեմատել Քերթողանոր «Նիւքար ուն ասացեալ Մարէս»-ի և Առյուն Արամի հետ: Վերջինը իր թեսալացի անվանակցի նման՝ Արմենիայի անվանադիրն է, «յորոյ անոն և զաշխարհն մեր անուամեն ամենայն ազգը, որպէս Ցոյնը՝ Արմէն, իսկ Պարսիկը և Ասորիի՝ Արմէնիկը»⁹: Նիմոսի թագավորելոց առաջ Մարեսը երկու տարով իրեն է ենթարկում Հայաստանը, բայց Արամը նրան «ձերբակալ արարեալ ածէ յԱրմափիր, և անդ ուրեմն ի ծայրս աշտարակի պարսակն ցից վարեալ երկաթի ընդ ճակատն, յորմն վարսել հրամայէ»: Արամը տիրում է մեղացիների երկրին մինչև Նիմոսի գահակալումը:

Հունահռոմեական պատմիչները Առյօնական վարանում են Արմենոսի հիմնած երկիրը առանձին թագավորություն կոչել, թեև նրանը ի դեմս թեսալացու տեսմում են Մեղոսին հավասարազոր արքայի: Արմենոսը համարվում է միայն Հայաստան երկրի և հայ ժողովրդի անվանադիրը, իսկ ամբողջ Արևելքի թագավորությունը, որի մասն էր կազմում Հայաստանը, կրում էր Մեղոսի անունը:

Այս մեկնաբառանությունից հետո բնականաբար չենք կարող համաձայնվել հայագիտության մեջ արտահայտված այն կարծիքի հետ, թե Ստրաբոնը, իբր, միտումնա-

⁵ Մովսեսի Խորենացոյն Պարմութիւն Դայոց, աշխ. Մ. Արենան և Ս. Ցարութիւննան, Տիֆլիս, 1913, Ա, ԺԱ:

⁶ Պատրիարքին Սերեոսի, աշխ. Գ. Վ. Արքայակին, Երևան, 1979, Լ. 48-49: Երկի հեղինակին պայմանականությունն Սերեոս կոչելով՝ հեղինում ներ Գ. Արքայակին, որը թեև մերժում է, այդ աղբյուրի հայագիտության մեջ Անանի կամ «Այսականի հայսական պարմություն» անվամբ հայտել սկզբնական հարվածի, ինչպես նաև՝ բուն պարմության պատկանականությունը Սերեոս պարմիչի գոյին, բայց և այնպիս գրում է: «Սերեոսի անուեր տոյն հրապարակության վրա մներ պատկանել ներ պայմանականությն, նկատի ունենալով, որ հրապարակվող երկր քաղմից փափարկված ինքնույթ հայերն և այլ խորենական գիտական շրջանառության մեջ է. նրան այդ հեղինակի անվամբ յուրաքանչյուր եր փոփոխություն ավելորդ շիփոր կառաջացներ»: Անդ, Լ. 11:

⁷ Խորենացի, Ա, ԺԳ:

⁸ Խորենացի, Ա, ԽԱ-ԽԲ:

⁹ Խորենացի, Ա, ԺԲ:

Վոր Կերպով ներքել է մին հայկական թագավորների գոյության փաստը¹⁰: Թեսալացի Արմենոսին իրեն արքայի ընդունում է Անև Ն. Արդնցը¹¹, որի ուշադրությունից, սակայն, վրիպեկ է Արմենոսի՝ մերժացիների թագավորության երկրորդը լինելու պարագան:

Որ Ստրաբոնը Արմենոսին դիտել է իրքն հայոց առաջին ուսմանը, եթևում է նաև Օրանից, որ նա թեսալական ավանդությունը հաղորդելուց հետո միանգամից անցնում է Հայաստանի հաջորդ արքայատոմներին: Սրանցից առաջինի հիմնադրումը նա թվագրում է յոթ պարսկական ձեռովով Գառնիասա մոզի սպանության (Ք.ա. 522 թ.), մյուսներինը՝ հոռմեացիներից սելևկյան արքա Անտիոքոս Գ Մեծի կրած պարտության (Ք.ա. 189 թ.) ժամանակով:

«Հայաստանին, գրում է Ստրաբոնը, - տիրել են պարսիկները, իսկ դրասից հասու Ասորիի և Մարաստանի վրա իշխած մակեդոնացիները (կատείχօն տὴν' Αρμενίαν Πέρσαι καὶ Μακεδόνες, մετὰ ταῦτα οἱ τὴν Συρίαν ἔχοντες καὶ τὴν Μεδίαν): Վերջին իշխողն էր Ορոնտեսը (τελευταῖος δ' ὑπῆρχεν Όρόντης), οրῳ շառավիղն էր Հյուդարնեսի՝ յոթ պարսիկներից մեկի: Այնուեւսու հոπլիտացիների դեմ պատերազմած Անտիոքոս Մեծի ստրատեգուներ Արտաքիասը և Զարիադրիսը երկիրը բաժանեցին երկու մասի: Սրանք իշխում էին թագավորի հանձնարարությամբ, բայց երա պարտությունից հետո անցան հոփլիտացիների կողմը և անկախանալով՝ թագավորներ հայտարարվեցին»¹²:

Այս հանգամանքը, որ հունարեն բնագրում «դրամից հետո (մետա տանτա» մակրայր զետեղված է մակեդոնացիների և Ասորիքի ու Մարատանի տիրակալների (Սելևկյանների) անունների միջև, թարգմանիչների մեծ մասին առիթ է տվել ենթադրելու, թե հետինակը մակեդոնացիներին ժամանակագրորեն նշում է Սելևկյաններից առաջ: Հստ այսմ ըննարկվող հատվածի առաջին մասը ավելի հաճախ թարգմանվել է հետևյալ կերպ: «Հայատանին տիրել են պարսիկները և մակեդոնացիները, իսկ դրամից հետո՝ Սելևկյանները, որոնք նվաճել էին Ասորիքը և Մարատանը»¹³:

¹⁰ Լ. Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան, 1993, լ. 275, 316:

¹¹ Ն. Աղոնց, «Հայաստանի պատմություն», Ֆրանսերևնից թարգմանեց Վ. Դ. Սևորոսյանը, Երևան, 1972, 19

316-318:

¹² Strabo, XI, 14, 15:

¹³ Հմմունք. Ռ. Մատենադարան, Քննական փետություն իայ Առողջության և Ա. Երևան, 1944, լ. 126:

¹⁴ Strabo, XI, 13, 5:

¹⁵ Strabo, XI, 9, 2:

Սուրիաց պարագաներու մասին հայտնի առաջնային հայտնիություններից մեջ՝ Հայաստանի պատմության մասին առաջնային հայտնիությունը կազմված է Հայաստանի պատմության մասին առաջնային հայտնիություններից:

Իրավացի է Գ. Տիրացյանը, երբ հենվելով ավելի ստուգ մեկնաբանությունների վրա՝ գտնում է, որ մակեդոնացիների «անվան տակ պետք է հասկանալ ոչ թե Ալեքսանդր Մակեդոնացուն, այլ նույն Սելևկյաններին, մի նույնացուն, որը հաստատվում է բազմաթիվ, այդ թվում նաև հենց Ստրաբոնի թերած փաստերով»¹⁶: Հույն աշխարհագիրը, ուրեմն, պարսիկներից հետո Հայաստանի այլ մակեդոնացի տիրակալների չի հշում, քան` Սելևկյաններին, որոնց նա անվանում է «Ստրաբի և Մարտասանի վրա իշխած մակեդոնացիներ»:

Հարկ չկա զարմանալու, որ «Աշխարհագրության» մեզ հետաքրքրող դրվագում Ստրաբոնը պարսիկների անմիջական հաջորդների ներկայացնում է Սելևկյաններին և ոչ թե՝ մակեդոնական կայսրության հիմնադիր Ալեքսանդրին: Նույն կերպ նա վարվում է Մարտասանի վերաբերող հետևյալ հատվածում. «Եկրատանը որպես արքունի ձմեռոց ծառայել է ինչպես պարսիկների, այնպես էլ Ստրաբին տիրած մակեդոնացիների համար, այն բանից հետո, երբ նրանք նվաճեցին պարսիկներին»¹⁸: Ինչպես տեսնում ենք, նա պատեղ նույնային շրջանցում է Ալեքսանդրին:

Գ. Տիրացյանը Հայաստանում մակեդոնական գերիշխանության հաստատումը՝ ըստ Ստրաբոնի թվագրում է Ք.ա. 301 թվականով¹⁹: Մեզ ավելի հավանական է թվում Ք.ա 323 թվականը, որով Սովուս Խորենացին և այլ հետինակներ թվագրում են Սելևկոս Ա Նիկատորի (Ք.ա. 312–280 թթ.) գահակալումը²⁰: Հենց այդ ժամանակ է, որ Ալեքսանդրի դիադիմաներ (ժառանգորդներ) Եվմենեար և Նեոպտոլեմոսը, Պլուտարքոսի վկայությամբ, տիրել են Կապադովկիային և Հայաստանին²¹: Ստրաբոնը պատմում է, որ մակեդոնացիները Կապադովկիան գրավելուց հետո երկրի նախկին երկու աքեմենյան սատրապությունների փոխարեն հիմնեցին Կապադովկիայի և Պոնտոսի թագավորությունները²²: Այդ պետությունների արքաները՝ Արիարաթյաններն ու Միթրատյանները, Երվանդունների նման սերում էին յոթ պարսիկներից²³:

Այստեղից պարզվում է, որ Ստրաբոնը Հայաստանի մակեդոնացի իշխողների անվան տակ հասկացել է Երվանդունի արքաներին: Նրանց նախանձի Հյուդանեաը մեզն էր այն յոթ պարսիկներից, որոնք Ք.ա. 522 թվականին դաշտարար սպանել էին Աքեմենյանների գահը խարեւությամբ զավթած Գաումատա մողեն: Երվանդունների հրենաց հզորությամբ և

¹⁶ Strabo, XVI, 1, 18:

¹⁷ Հայ ժողովրդի պարմություն, հայոր 1, Երևան, 1971, լ. 501:

¹⁸ Strabo, XI, 13, 5:

¹⁹ Հայ ժողովրդի պարմություն, լ. 511:

²⁰ L. Շահինյան, Մովսես Խորենացի. պարմություն և ժամանակագրություն, Երևան, 1989, լ. 76 – 112:

²¹ Plut., Eumenes, III, 3-4, 12-13; IV, 1-2: Τ. Մանանեյան, նշվ. աշխ., լ. 94-95: Մանանեյանը գլուխ լ., որ Պլուտարքոսը Հայաստան ասելով նկատի լ. ունեցել Փոքր Հայրը: Սակայն Ստրաբոնի վկայությունը որոշակիութեան վերաբերում լ. Մեծ Հայրին, որինմ Պլուտարքոսն լ. հազիվ թև այլ հայկական երկիր ակնարկեր:

²² Strabo, XII, 1, 4:

²³ Polyb., XLIII, 2: Diod., XIX, 40, 2: XXXI, 19, 1-2:

համբավով չեն զիշում Կապադովկիայի և Պոնտոսի թագավորներին: Եթեք հարևան ժողովուրդներից առաջինը թերևս հայերն էին, որ նախկին արեմնեան սատրապության ավերակների վրա հիմնեցին իրենց ամելախ պետությունը (Ք.ա. շուրջ 331 թ.)²⁴: Պոնտոսի թագավորությունը հիմնադրվել է ավելի ուշ՝ Ք.ա. մոտ 301 թ.²⁵: Ինչ վերաբերում է Կապադովկիային, ապա մասնագետները կարծում են, որ այդ պետությունը նույնական պետք է ստեղծված լիներ IV դարի վերջին կամ III դարի առաջին կետում Հայաստանի թագավոր Օրոնտես-Արտամենս-Երվանդի (Արտամենսի) ուղարկան աշակեցության շնորհիվ²⁶:

Աճմար է մտածել, թե Ստրաբոնը վարանել է ճանաչելու Երվանդումիների թագավորությունը՝ մակեդոնացիների գերիշխանության ներքո նրանց իշխած լինելու պատճառով: Եթե այդպես լիներ, ապա հեղինակը չեր ընդունի նաև Կապադովկիայի, Պոնտոսի և Ատրպատականի թագավորությունների գոյության փաստը, իսկ բուն Պարսկաստանի մասին՝ չեր ասի հետևյալը. «Ներկայումս առանձին պետություն կազմող պարսիկներն ունեն իրենց թագավորները, որոնք ենթարկվում են օտար արքաների, նախկինում՝ մակեդոնացիներին, իսկ հիմա՝ պարթևներին»²⁷:

Ցորե պարսիկներից ծագելու հանգամանքը Ստրաբոնին չի խանգարում, որպեսզի նա եթեք հարևան թագավորությունները ենթարկացնի մակեդոնացիների ամվան տակ և նույնիկ պնդի, որ Կապադովկիայի հիմնադրումը կատարվել է ժողովրդի մի մասի կամքին հակառակ: Վերը տեսանք, որ նա Արմենոսի թագավորությունը պատկերացնում է Արևելքում գերիշխող մեղական ազգի անունով: Այժմ էլ համոզվում ենք, որ նա Երվանդումիներին, Արիարաթյաններին և Միհրդատյաններին անվանում է մակեդոնացիներ՝ Արևելքի թագավորության նոր տիրակալների անունով: Թե ինչու նրանց թագավորումը պիտի առաջացներ ժողովրդի մի խալի դժգոհությունը, այդ հարցին կամրջադանք ավելի ուշ:

Հաս Ստրաբոնի՝ Հայաստանում մակեդոնացիներից վերջին իշխողը եղել է Անտիոքոս Մ'նձի (Ք.ա. 223–187 թթ.) ստրատեգուններին՝ զորավար-կառավարիչներին նախորդած Երվանդը (Օրոնտես): Այդ կապակցությամբ Լ. Շահինյանը գրում է. «Մտածել, թե (Երվանդը – Վ.Ա.) Հյուդաթեանի տոհմի վերջին իշխողն էր Հայաստանում, ճիշտ չի լինի, ամբարիր է Ստրաբոնի շարադրանքի կառուցվածքին... բազրում զիսավոր միտքն է՝ «վերջին իշխողն էր Օրոնտես», իսկ Հյուդաթեանին հիշելը երկրորդական, լրացնող միտքն է, սուկ բացատրական բնույթ ունի... Զի կարելի հասկանալ նաև, որ Օրոնտեսը Հայաստանի վերջին իշխողն էր, քանի որ նույն հերքը՝ Ստրաբոնը հիշում է Արտաշեսին, Տիգրանին, Արտօվագոյին որպես նրա հաջորդների... Մնում է մտածել, որ Օրոնտեսը մակեդոնական կամ սելևկյան (Արանց նշանակած) վերջին իշխողն էր Հայաստանում»: Բայց այս դեպքում էլ հարցը չի լուծվում. «Ինչու նա պետք է Օրոնտեսին համարեր Հայաստանի վերջին սելևկյան իշխող, եթե իր նշումով Արտաշեսը և Անտիոքոս Գ-ի, այսինքն՝ Սելևկյանների կողմից նշանակված Հայաստանի կառավարիչ էր և, փաստորեն, վերջինը»: Այստեղից

²⁴ C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, 1963, լ. 288:

²⁵ Th. Reinach, Mithridate Eupator roi de Pont, Paris, 1890, լ. 30–31: Դ. Մանանյան, լ. 98:

²⁶ Diod., XXXI, 19, 5: Դ. Մանանյան, լ. 99:

²⁷ Strabo, XV, 3, 24:

«Բետևում է, որ *Ստրաբոնի հիշած Օրոնտեսը* չի եղել *Արտաշեսի* անմիջական նախորդը (շեղագիրը թեղինակիցն է - Վ.Ա.), այլ իշխել է շատ ավելի վայր».

Սակայն բնագիրը ոչ մի հիմք չի տալիս Երվանդին ժամանակով ჩեղացնելու ատրաւեցումներից: Հիշենք նաև, որ Խորենացու²⁹ և Սերեսոփի³⁰ պահածած հայոց արքայացանկերում Երվանդ Շերկայացվում է որպես Արտաշեսի անմիջական նախորդ: Քերիտառահայրը հանգամանորեն կանգ է առնում Գրանց հակամարտության պատմության վրա: Լ. Ծահինյանը թեև փորձում է հերքել Ստրաբոնի և Խորենացու վկայած համանուն իշխողների հովանությունը, բայց այդ մասին հայագիտության մեջ գերիշխող տեսակենտ³¹ մնում է ուժի մեջ: Բնագրում որևէ հակասություն չենք տեսնում: Երվանդը դիտվում է որպես մակեդոնացիներից Վերջինը, քանզի Արտաշես-Արտաքիսար և Զարեհ-Զարիադրիսը ապատամբում են Մելկոնյանների դեմ և իշխում են որպես անկախ թագավորներ:

Արտաշեսի արամեներն արձանագրություններից զիտենք, որ նա իրեն սերած է համարել նույն Երվանդունի (բանձու) արքայատոհմի ճյուղերից մեկից, և՝ որ նա հոր անունը եղել է Զարեն (zrtyr)³²: Երվանդի և նրան տապալած ստրատեգուների տոհմակցության փաստը երբեմ կամածի տեղիք չէր տա, եթե հայագետները Ստրաբոնի գործածած «Վերջին իշխող» արտահայտությունը չընկալեին՝ Հյուտարնյաններից վերջինը Երվանդի լինելու իմաստով: Արդեն տեսանք, որ դա այդպես չէ: Երվանդը իրեն հաջորդած իշխողներից բնագրում անջատված է ոչ թե իր ծագումով, այլ՝ մակեդոնացիների գերիշխանության մերքը իշխած Վերջին թագավորը լինելու հանգամանքով: Նույն տարբերությունը Ստրաբոնը նշում է նաև Երվանդունի սատրապների և արքաների միջև, առաջիններին կոչելով պարսկականեր, իսկ երկրորդներին՝ մակեդոնացիներ:

Եվ իրոք, եթե պատմիշը չընդուներ ստրատեգումերի երվանդյան ծագումը, առ մեզ կտեղեկացներ, թե ճրանք ինչ տոհմի են պատկանել: Ստրաբոնի հման մի հեղինակ, որ հասուկ ուշադրություն է դարձնում Արմենյանների և Երվանդումիների հայսահայրերին, չեր կարող քար անտարբերությամբ անցնել հայկական ամենազորեղ հարստությունների ծագման հարցի վրայով: Նա պարզապես ավելորդ է համարում ստրատեգումների կապակցությամբ կրկնելու նույն Հյուդարնեսին վերաբերող ծագումնաբանական ավանդությունը, որին նա արդեն անդրադակ էր Արտաշեսի և Զարեհի տոհմակից Երվանդից հի-

²⁸ L. Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիններ, 19 36-37:

29 Խորենացի, Բ, ԼՀ - ԽԶ:

³⁰ Uspensky, I.9 54–55:

³¹ Я. А. Манапян, О торговых и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1930, № 97; Դ.Մանեսյան, Եջմ. աշխ., № 125-128; Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմոթյան» ժամանակակրթական համակարգը, Երևան, 1965, № 78, 85; Նոյն հետինակի՝ Նովակիսկի պատմության դարաշրջանի հայութանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, զլ. 3:

³² Ի փարքերոյն արձանագրությունների ատադին վերծանողների (Ա. Բօրիսօվ, Խալպիս Արտակն (Արտակսա), բարձ Արմենի, ՎՃԻ, 1946, #2, լր 97-104; Ի. Մ. Դյակով, Կ. Բ. Շտրկով, Խալպիս Արտակն (Արտակսա I), բարձ Արմենի, ՎՃԻ, 1955, #2, լր 161-174), հերազարդություններ (Գ. Տիրացյան, Արդար Ա-ի արձանագրությունների արձանագրություններ, Տեղական ՀԿ, 1957, թիվ 10, լր 105-109; Ա. Գ. Պերիխանյան, Արամելյան Խալպիս առ Յանձնական արձանագրություններ, ՏԵԿ, թիվ 4, 1965, լր 107-128) համոզվեին, որ *rwndkn-p* թագավորի գործանունն է:

շատակելիս:

Վերը նշված փաստերը միաժամանակ՝ ցուց են տալիս, որ Երվանդունի սատրապներին նաև իրեն պարսիկների ներկայացնելով հանդերձ՝ Ստրաբոնը կարող էր նրանց այլ ծագում վերագրել: Դրան ամենահայ չէր խանգարի Հյուդաթների յոթ պարսիկներից մեկը լի-նելու հանգամանքը: Այսպես, Դիոդորոս Սիկիիացին (Ք.ա. I դար) հաղորդում է. «Կապա-դովկիայի թագավորներն ասում են, թե իրենց տոհմը վերաբերում է պարսիկների Կյուրոս արքային և պահում են, թե իրենք հետարրներն են յոթ պարսիկներից մեկի, որոնք սպանել են մողին: Նրանք իրենց ցեղակցությունը Կյուրոսի հետ հաշվում են հետևյալ կերպ: Կամր-յուսեսը՝ Կյուրոսի հայրը, ունեցել է հարազատ մի քոյր Ատոսա անունով: Արա սրանից ու Կապադովկիայի թագավոր Փառնակեսից ծնվել է մի տղա՝ Գալոսը, և սրանից ծնվել է Սմերդիսը, սրանից՝ Արտամնեսը, սրանից՝ Անափասը, որն իր առանձնակի քաջությամբ ու խիզախությամբ դարձել է յոթ պարսիկներից մեկը: Արա այսպես են նրանք քացատ-րում իրենց ծագումնաբանական ցեղակցությունը Կյուրոսի, ինչպես նաև Անափասի հետ, որին էլ, ինչպես նրանք ասում են, իր արիության համար շնորհվել է իշխանությունը Կա-պադովկիայի վրա, պարսիկներին ոչ մի հարկ չվճարելու պայմանով»³³:

Այս տոհմաբանությունը ցուց է տալիս, թե յոթ պարսիկների սերունդներն ինչպես էին ներկայացնում իրենց ծագումը: Կապադովկիայի արքաների հայրական նախանձ համար-վել է երկրի բնիկ թագավոր Փառնակեսը, որն ամուսնացել էր պարսիկ թագավորության թիմնադիր Կյուրոսի (Ք.ա. շուրջ 558–530 թթ.) հորաքրոջ՝ Ատոսայի հետ: Վերջինի եղայ-րը և Կյուրոսի հայրը՝ Կամբյուսեսը, դիտվել է որպես Անափասի մայրական նախանձ: Դիո-դորոսը վկայում է, որ Անափասը ոչ թե իր ծագումով, այլ՝ միայն իր խիզախության շնոր-հիկ է դարձել յոթ պարսիկներից մեկը, և՝ հայրնենի Կապադովկիայի վրա իշխելու իրա-վունքը ստացել է «պարսիկներին ոչ մի հարկ չվճարելու պայմանով»: Ինչպես տեսնում ենք, Անափասին պարսիկ կոչելով հանդերձ՝ Կապադովկիայի արքաները նրան տարբե-րել են հայրական գծով պարսիկներից:

Արտաշեսի արձանագրություններում արքայատոհմին տրված «Երվանդական» անվա-նումը վկայում է այն մասին, որ թագավորը իր ցեղի անվանադիր նախանու դերը հատկաց-րել է ոչ թե Հյուդաթնեսին կամ Աքեմենյաններից որևէ մեկին, այլ՝ Երվանդին: Եթե ի մի բերենք բոլոր այն փաստերը, որոնք կարող են մեզ օգնել կոստելու, թե հայրական գծով ինչ ծագում են իրենց վերագրել Արտաշեսյանները, ապա անհսուսափելիորեն պիտի հան-գենք այն եզրակացությանը, որ նրանք, Կապադովկիայի թագավորների նման, ի դեմս իրենց նախանու տեսել են նույն Կամբյուսի և Ատոսայի ժամանակակից բնիկ թագավո-րին, այն տարբերությամբ, որ հայերի դեպքում նախանձ ոչ թե Փառնակեսն է, այլ՝ հայոց Երվանդ արքան: Դա երևում է, նախ և առաջ, նրանից, որ Արտաշեսյանների ամենից հա-ճախ գործածած արքայանունը (Տիգրան) ըստ Քսենոփոնի³⁴ և Խորենացու՝ կրել է Կյուրո-սի դաշնակից հայոց արքայազնը կամ թագավորը, որին Քերթողահայոց սիրում է կոչել

³³ Դիոդորոս Սիկիիացի, թարգմանություն ընագրից, առաջարան և ծանոթագրություններ Ս. Մ. Կրլյա-շարյանի, Երևան, 1985, լ. 153:

³⁴ Խեռ., Ծցոր., II, 4: III, 1-3:

«Երուանդեանս Տիգրան», վկայելով, որ զրա հոր անունը եղել է Երվանդ³⁵:

Հայագիտական երկերում հաճախ հանդիպող այն կասկածը, թե Քսենոփոնի հաղորդած տիգրանյան ավանդության մեջ Երվանդի անունը կարող էր ներմուծված լինել Խորենացու սեփական նախաձեռնությամբ, ներքվում է բյուզանդացի պատմիչ Զոնարասի (XII դար) այն վկայության միջոցով, որի համաձայն՝ Կամբյուսեսի և իր քույր Ատոսայի որդու անունը եղել է Օրոնտես³⁶: Քերթողահայրը, ուրեմն, իր ձեռքի տակ իսկապես ունեցել է Տիգրանի ժամանակակից Երվանդին Վերաբերող տվյալ: Խորենացին և Զոնարասը պահպանել են ավանդության երկու տարբերակներ, որոնցից մեկում Երվանդը հանդես է եկել որպես հայ, մյուսում՝ պարսիկ:

Եթե Երվանդունի Անտիոքոս Ս. Կոմագենացու (Ք.ա. 69–34 թթ.) արձանագրությունները³⁷ մեկարամենք այն իմաստով, որ նա իր ծագումը ուղիղ գծով բնեցրել է Դարեհ Ա.-ից, կարելի էր ենթադրել, որ Զոնարասի աղբյուրը ստեղծվել է ավելի ուշ շրջանում, եթե Երվանդունիների վերջին շառավիղները հոռմեացիների հավանողական ծրագրերին հակառակ են իրենց՝ Աքեմենյանների լիիրավ ժառանգորդները լինելու, հայրական գծով հրանցից սերելու վերաբերյալ քաղաքական տեսակետով: Այդպես մտածելու համար, սակայն, պետք է վատահ լինենք, որ Նեմրոտ լեռան արձանագրությունների շարդված սալերից մեկը նվիրված չի եղել Հյուդարնեսին: Քանի որ նման երաշխիք չկա³⁸, հավանական է, որ տոհմածառում Դարեհի կողքին Հյուդարնեսն էլ օշված լիներ որպես հիմնադիր, ճիշտ այնպես, ինչպես նոյն կոմագենացի Անտիոքոսի սելևկյան մայրական Զախնիների շարքը սկսվում է երկու հիմնադիրներով՝ Ալեքսանդրով և Սելեկոսով:

Արդ ե՞րբ է գոյացել Երվանդունիների հայկական ծագման վերաբերյալ ավանդությունը: Ս. Կրկյաշարյանը այն կարծիքին է, որ նախարարտաշեայան Երվանդունիները Տիգրանին իրենց նախնին չեն համարել³⁹: Այլ տեսակետ է պաշտպանում Ժ. Էլիքրեկյանը, որը Պերգամոնի Ք.ա. IV դարի հունարեն արձանագրության մեջ Օրոնտասին Վերագրված բակտրիական ծագումը՝ առաջարկում է հասկանալ հայկական ծագման իմաստով⁴⁰: Խոսքը Բյուրի նահանջի տարիներին (Ք.ա. 401–400 թթ.) Հայաստանի սատրապ Օրոնտասի մասին է, որը Արտաքսերքսես II Մնեմոնի (Ք.ա. 404–359 թթ.) դստեր՝ Հռոդոդոնեի ամուսինն էր: Ըստ Ժ. Էլիքրեկյանի՝ շփոթի պատճառը եղել է Բակտրիայի և նրա Զարիասպա մայրաքաղաքի անվան նմանությունը Հայաստանի Զարասպ տեղանվան հետ, մի լեռան, որի շրջակայքում բնակվել է Aroandes կամ Oroandes ցեղը: Սրա հիման վրա նա ժխտում է Երվանդունիների հյուդարնեան ծագումը:

Մեզ ավելի հավանական է թվում այն հնարավորությունը, որ նախարարտաշեայան շըրշանում ևս գոյություն են ունեցել Երվանդունիների ծագումնաբանության վերոհիշյալ երկու տարբերակները: Ըստ որում՝ դրանք հավանաբար հայտնի են եղել նաև Քսենոփոնին:

³⁵ Խորենացի, Ա, ԻԲ, ԽԴ:

³⁶ Zonar., XIII, 8:

³⁷ K. Humann und O. Puchstein, Reisen in Kleinasiens und Nordsyrien, Berlin, 1890, I, 9 308:

³⁸ Գ. Խ. Սարգսյան, Նոյննիսպական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, լ, 9 31:

³⁹ Ս. Մ. Կրկյաշարյան, Երվանդոնի արքայապետի Հայաստանում, ՊԲՀ, 1973, թիվ 4, 179–186:

⁴⁰ Ժ. Գ. Էլիքրեկյան, Երվանդունիների ծագման հարցի շորջը, ՊԲՀ, 1971, թիվ 2, լ, 9 107–115:

Նա թերևս տեղյակ է եղել Տիգրանի հորը վերագրված Երվանդ ամվանը, բայց՝ գտնվել է այն հայերի ազդեցության տակ, որոնք հավատ չեն ընծայում Երվանդումիմերից Տիգրանի ծագման հնարավորությանը: Այդ պատճառով էլ նրա հայրը Քսենոփոնի մոտ հանդես է գալիս որպես անանուն թագավոր:

Հոդոդղումների ամուսնու բակտրիական ծագման վերաբերյալ կարծիքը հազիվ թե առաջացած լինելու սուկ աշխարհագրական անունների շփոթի հետևանքով, ինչպես կարծում է Ժ. Էլշիբեկյանը: Եթե նույնական մերժման միանալամայն հավանական այն հնարավորությունը, որ Օրոնտասն ինքն է հովաներին հայտնել իր հայկական ծագման մասին, միևնույն է՝ հովաները նրան որպես Արմենիայի սատրապական տոհմի Աերկայացուցի՝ կարող էին համարել Պլատոնի վկայած պամփյուլացի Արմենիոսի և նրա որդի Էրի (Արայի) սերունդը, և քանի որ վերջիններանք նույնացնում էին բակտրիացի կամ մեղացի Զրադաշտ մոզի հետ, ապա Երվանդին էլ՝ ի վերջո ընկալել են իրեն բակտրիացու կամ մեղացու: Գառումատա կամ Սմերդիս մոզի անվանակիցը՝ Կյուրոսի Բարդիյա կամ Սմերդիս որդին, որը հունական պատմագրության մեջ երթեմն կոչվում է նաև Տանառքարես կամ Տանուրքարես: Աերկայացվում է մերթ բակտրիացիների և այլոց, մերթ էլ՝ մեղացիների, հայերի և կարուսացիների փոխարքայի դերում⁴¹:

Մովսես Խորենացին գրում է. «Զրադաշտ մոզ, արքայ Բակտրիացուց, որ է Մեղաց»⁴²: Զրադաշտ-Զրորաստրեաը հայտնի էր նաև որպես Արմենիոս Պամփյուլացու որդի⁴³: Պամփյուլացին կարող էր հետազայում նույնացվել իր թեսալացի անվանակցի հետ: Ստրաբոն խոտում է Հայաստանում Յատնի պատվին հիմնադրված մերժաների մասին: Իրականում դրանք Յատնի հետ կապ չունեցած զրադաշտական տաճարներ էին, որոնց չափանիկ անունը հովաներին շփոթության մեջ էր գցել⁴⁴: Տեղական ավանդությունը այդ մերժաների կառուցումը բնականաբար պիտի վերագրեր կրոնի հիմնադիր Արա-Զրադաշտին: Հովաներն էլ իրենց հերթին ի դեմք նրա պիտի տեսնեն թեսալացու հետ նույնացված պամփյուլացի Արմենիոսի որդուն: Յատնի ուղեկիցը, ինչպես վերը տեսանք, որոշ գծերով համապատասխանում է Խորենացու Արամին, իսկ նրա որդին հենց Արա էր: Կարելի է, ուրեմն, պնդել, որ Ստրաբոն Խորենացու նման Երվանդումիներին համարել է Արամ-Արմենիոսի և նրա որդու՝ Արա-Էրի շառավիղը, մի ավանդություն, որն անուղղակիրեն արտացոլված է նաև Պերգամոնի թ.ա. IV դարի հունարեն արձանագրության մեջ:

Կապահովվելով թագավորները նույնական հայրական գծով իրենց դասել են քրմերի կամ մոզերի շարքին: Պատահական չէ, որ արքայաստոմի հիմնադիր Փառնակեսի որդին անվանվում է Գալոս, իսկ թոռը՝ Սմերդիս: Սրանցից առաջինի անունը այլ բան չէ, քան մեռնող և հանող Արայի և նրա տարփուին Ծամիրամի տարրերակը հանդիսացող փոքրասիական աստվածային զուգի՝ Աստիսի և Կյուրեկելի քրմերի անունը, իսկ երկրորդինը՝ այն մոզի, որի դեմ իր վեց համախոնների հետ միասին դավադրություն էր նյութել Դարեն Ա.

⁴¹ Հմմբ. Ն. Աղոնց, Եղվ. աշխ., լ.9 335:

⁴² Խորենացի, Ա, Զ:

⁴³ Հմմբ. Clem. Alex., Strom., V, 14:

⁴⁴ J. Markwart, Suedarmenien und Tigrisquellen nach den griechischen und arabischen Geographen, Wien, 1930, լ.9 535: Ն. Աղոնց, Եղվ. աշխ., լ.9 319:

Վշտասպյանը (Ք.ա. 522 – 486թթ.):

Այսուեղից պարզվում է, թե ինչու Կապադովկիայի ժողովրդի մի մասը, Ստրաբոնի վկայությամբ, դեմ է եղել սեփական թագավորություն ունենալուն: Մողերի տոհմից դուրս եկած սատրապների գահակալումը չէր կարող խաճառավառությամբ ընդունել Աքեմենյանների հետամարտ և երունդների կողմից: Նրանք ընդդիմանալու էին Գաումատայի տոհմի հարությամբ: Սակայն Դարեհյանների ժամանակը սպառվել էր, և Արևելքի իշխանությունը նորից անցել էր քաղղենացիների ձեռքը: Ալեքսանդրը հոչակվել էր Քամ-Տիտան-Զրադաշտի հետ հաճախ Առյանցվոյ⁴⁵ եզիապտական աստված Ամոնի որդի: Նրան համարում էին նաև եզիապոսի վերջին փարավոն, քուրմ կամ մոգ Նեքտաներոսի որդի: Նա փաստորեն դառնում էր Արայի և Երվանդունիների ազգակիցը:

Արտաշեսի հոր անունը, որը համելիպում է Զարիաթրա, Զարիաթրիս և Sariaster ձևերով⁴⁶, ինչպես մեզ է թվում, Առյանցվել է Զորոաստրես-Զրադաշտի անվան հետ: Նման անուն կարող էր ունենալ քուրմը: Արձանագրություններում զա հանդես է զալիս առանց արքայական տիտղոսի, մի հանգամանք, որը նույնպես մտածել է տալիս Արա՝ հոգևոր առաջնորդ լինելու մասին: Արտաշեսի անվանակցի՝ Սասամյան հարստության հիմնադիր Արտաշիր թագավորի հայրն ու պապը Անահիտի մերիյանի քրմապետներն էին: Զարեհն էլ գուցե եղել է Արտաշատի կամ Աշտիշատի Անահիտ-Ռակեմոր (Վահագնի) մերիյանի քրմապետը:

Երվանդին գահնելեց անելիս Արտաշեսը բնականաբար շրջանառության մեջ պիտի մտցներ ծագումնաբանական ավանդության այն տարրերակը, որի համաձայն Երվանդը կապ չի ունեցել Արայի բուն հայկական ցեղի հետ, այլ՝ սերել է աքեմենյան Կամբյուսեսի և Աստոսայի որորուց: Սրա փոխարեն ինքը Արտաշեսը՝ Արայի շառավիդ Երվանդունի Զարեհ քրմապետի որդին էր, հայոց գահի օրինական ժառանգորդը: Այլ կերպ ասած, Երվանդունիների արքայատոհմում տեղի էր ունեցել նույնպիսի մի ընդհարություն, ինչպիսին էր Աքեմենյանների կյուրոպան և դարեհյան ճյուղերի միջև բախումը, այս տարրերությամբ, որ Պարսկաստանու Կյուրոսի ճյուղը պարտվել էր, իսկ Հայաստանում նրան համապատասխանող Տիգրանի ճյուղը՝ հայթանակել:

Հայ քրիստոնեական պատմագրությունը Հայաստանի բնիկ թագավորության գոյությունը ընդունում է միայն այն կարճ ժամանակահատվածում, եթե Արևելքի իշխանությունը չի պատկանել քաղղենացիներին: Ըստ Մովսես Խորենացու՝ առաջին թագավորը եղել է Պարույր, իսկ վերջինը՝ Վահեն (Ալեքսանդրի ձեռքով սպանված): Քերթողահայրը բուն հայոց թագավորությունը տեղադրում է մեղացիների և Աքեմենյանների օրոք: Նախորդ Հայկաններից առավել զորեղին՝ Արամին, և նրա որդուն նույնպես նա ժամանակակցում է մեղացիների՝ Մադեսի և Զրադաշտի հետ: Արտաշեսյանները Խորենացու մոտ քողարկված հանդես են զալիս օտար պարթևական ծագումով հայ Արշակունիների արքայացակում:

Ինչ վերաբերում է Ստրաբոնին, ապա նա ճանաչում է չորս հայկական հարստություններ՝ Արմենյաններ, Երվանդունիներ, Արտաշեսյաններ և Զարեհյաններ, որոնք բոլորն են

⁴⁵ Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Ա, Երևան, 1985, լ. 176:

⁴⁶ Val. Max., IX, 11:

Անվանադիր Ամայակի անվանադիր Ամայակի Արմենոսից: Բնագրում Հյուտարնեաը միայն մայրական գծով է դիտվում որպես Աքեմենյանների ժառանգորդ: Ակսած առասպելական Արգոնավորդների ժամանակից ընթիրուած մինչև «Աշխարհագրության» սուեդման օրերը՝ Հայատանը անընդմեջ կառավարվում է իր սեփական արքայաստիմների կողմից:

Հայատանի մասին հեղինակի ունեցած պատկերացումը, ըստ Էռթյան, չի տարբերվում իր հայրենակցի՝ Պոնտոսի թագավոր Միհրդատ Զ Եպատորի (Ք.ա. 111-63 թթ.) արտահայտած այն կարծիքից, որի համաձայն՝ Մեծ և Փոքր Հայքերը երբեք չեն «կրել օտար իշխանություն, զրանք միշտ հնազանդվել են տեղական իրենց միայն թագավորներին»: Եթե ուզում են՝ թող քննության առնեն Կապադովկիան կամ Պահլազոնիան, Պոնտոսը կամ Բյուզանդիան, նմանապես և Մեծ Հայքը կամ Փոքր Հայքը. այդ ժողովուրդներից և ոչ մեկին ձեռք չէն տվել ո՞չ ինքը Ալեքսանդրը, որ նվաճել էր ամբողջ Ասիան, ո՞չ էլ որևէ մեկը զրա հաջորդներից կամ հետառդներից»⁴⁷:

Որ Ստրաբոն համաձայն է Միթրդատի սույն տեսակետի հետ, երևում է նաև նրա այն խոսքերից, որ Փոքր Հայքը և Ծոփքը «միշտ ունեցել են իրենց սեփական իշխողները»⁴⁸: Համեմատաբար փոքր հայկական պետությունների ինքնիշխանությունը ճանաչած պատմէը չէր կարող նոյն կարծիքը չունենալ նաև Մեծ Հայքի լայնածավալը և հզոր թագավորության մասին: Նա հավաստիացնում է, որ Ալեքսանդրը Մենոնի գլխավորությամբ մի զորամաս էր ուղարկել Հայաստա՞ն՝ Սյուսպիրիտիս (Հյուսպիրատիս) երկրամասում Կարալայի մոտ գտնվող ուկու համբերը գրավելու նպատակով, բայց տեղացիները պարտության էին մատնել նրան⁴⁹: Այստեղից դժվար է այլ տպավորություն ստանալ, քանի որ ինը Ալեքսանդրը, Բեղինակի պատկերացմամբ, ոչ միայն չի եղել Հայաստանում, այլև՝ մտադրություն էլ չի ունեցել նվաճելու ամբողջ երկիրը: Նա ընդամենը կամեցել է տիրել ուկու համբերին, մի ցանկություն, որն այդպես էլ չի իրականացել:

Այսուհետերձ, Հայաստանը Ստրաբոնի կողմից որպես անկախ թագավորություն է համարվում միայն Արտաշեսյանների և Զարեհյանների օրոք: Մյուս արքայատոհմների և Երկայնացուցիչներին առ դիտում է որպես մեղացիների, պարսիկների և մակեդոնացիների թագավորության իշխողների:

⁴⁷ Just., XXXVIII, 7: Հ. Մանանդյան, լ. 93-94:

48 Strabo, XII, 3, 28:

⁴⁹ Strabo, XI, 14, 9;